



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 27

ՀԱՐԱՐ

1 ՄԱՐՏ 1908

ՍՊԱՃԱԿԱՐԳ ԵՄԻՏԻՆՈՐԻ

ԶԵՆԻԹ

ՍՊԱՃԱԿԱՐԳ ԵՄԻՏԻՆՈՐԻ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.

Պաշտոն-Գրք, Օռնգալ-Պաք հաստատութեան դէմ, Թիւ 16

Հատոր 40 փարս

(آ. آصادوریان) شرکت صنییه مطبعیه — باب عالی حاده سنه ۱۳۰۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտոն-Ալի Գրքի Թիւ 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
լիփանգամամ մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լուս. մեքենայ մը ունենալ, որովհետեւ լուս. մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԲԱՅՏՈՒՆ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լուսագոյն է. սոյն մեքենան ամենէն կառարեւելի է, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՍԻՆԿԵՐԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

- | | |
|---------|--|
| ԲՆԲՐ. | (1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՒՑՍԸ | Զարչը Պոյու, թիւ 120 . |

Կասաբեայ երաթխաւարութիւն

Մասնահաշիւներ գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզզուրի ոտներ:



ԱՐՏԻԵԼՔ ՕՐԱ-

ԹԻՐԹ ազգային, գրական եւ հաղափախան :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսի համար 80 դր. վեցամսեայ 45 դր. գաւառներու համար տարեկան 108 դր. վեցամսեայ 60 դր. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառում՝ քաղ փառա: ԱՐՏԻԵԼՔ հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐՏԻԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿՆԻՔԱՐԻ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և Երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բացի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐՏԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագրին շնորհ է ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին Էֆ. Պոյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խմբագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ-ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 27

ՇԱՐԱԹ-

1 ՄԱՐՏ 1908



Մ. ԽԻՔԵՆԱՆ

ՎՍԵՍ. ԳՐԻԳՈՐ ԷՖԷՆՏԻ ԽՏՈՐԵԱՆ

Մ Ա Հ

ՎՍԵՄ. ԳՐԻԳՈՐ ԷՖԷՆՏԻ ԽՏԸՐԵԱՆԻ

ԱՆԴԱՄ ՀԱՇՈՒԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԻ

Մէկն ալ կը բաժնուի մեր համայնքէն, անձնաւորութիւն մ'ալ կը կորսնցնէ իր գոյութիւնը, տպար հայր մըն ալ կը հեռանայ ընտանիքէն: Կորուսներ կան՝ որոնց ցաւը մեծ է եւ սուգը ընդհանուր, ահա այսպիսի կորուստ մըն էր՝ ՎՍԵՄ. ԳՐԻԳՈՐ ԷՖԷՆՏԻ ԽՏԸՐԵԱՆԻ մահը: Նորին վաեմուքիւնը մին էր այն դէմքերէն՝ որոնք շատ մեծ ծառայութիւններ մատուցած են Պետութեան եւ համայնքին, հաւատարմաբար, պարկեւորէն եւ սրանց աշխատելով իրենց յանձնուած պատշտօնին մէջ, անթուլ, անխոնջ յարատեւելով ճամարտութեան բարձր շաւղին մէջ, շահելով Մեր Սիրելի Վեհապետին համակրութիւնը եւ գնահատումը: Ահա այսպիսի անբացառելի անձնաւորութիւն մըն էր Վսեմ. Գրիգոր Է. Խտը, որ Երկուշաբթի տարին յանձնել իր վերջին հանգստարանը: Իբր ընտանիքի հայր, զուգուրանօք հասցուցած է այսօր երկու մանչ զաւակներ, որոնք զայս զայս իրենց օրինակելի վարժով ու դիրքով պատիւ կը բերեն իրենց հօրը անունին. ինչպէս նաեւ երկու աղջիկներ, որոնցմէ մին ամուսնացած՝ ընտանի բոյնը կազմած է, իսկ պզտիկը խոստմանից՝ ապագայ ընտանիք մը կառավարելու ամեն ձիրքերով:

Ահա՛ գովելի կեանք մը, ահա՛ օրինակելի ընտանիքի պէս մը, եւ ահա՛ նոյն մը մարդկային անբասիր կենցաղին, որ կրնայ միաբարականք բլլալ իր վշտահար ընտանիքին, զաւակաց եւ ամեն անոնց՝ որոնք հեռու քէ մօտ կապակցութիւն ունին իր ուսայնին հետ:

* * *

Յուզարկաւորութեան տխուր հանդէսը կատարուեցաւ Երկուշաբթի, Բերա, Ս. Երրորդութիւն եկեղեցին, նախագահութեամբ Ամեն Ս. Պատրիարք Հօր, իր շուրջը ունենալով Եպիսկոպոսներ, Վարդապետներ եւ բազմաթիւ Քահանաներ:

Յաւատարմութեան՝ Նորին Սրբազնութիւնը իրեն յատուկ կուռ եւ իմաստային ոնով խօսեցաւ դամբանականը, վեր առնելով Վսեմ. Հանգուցելոյն բարձր ծառայութիւններն Պետութեան եւ համայնքին, ուրկէ վերջ մարմինը շինք մեղակալուով մը փոխադրուեցաւ Շիրիի Ազգ. Գերեզմանատունը ամփոփուելու համար ընտանիքին յատուկ դամբարանին մէջ:

Եկեղեցին ամբողջ լուսազարդուած էր այս առթիւ եւ կը հեծէր յուզարկաւորներու ընտել բազմութեամբ մը, որոնք մասնաւոր կառներով հետեւեցան մեղակալութիւն մինչեւ գերեզմանատուն, ուր իրենց ցաւակցութիւնները յայտնեցին Վսեմ. Հանգուցելոյն զաւակաց եւ պարագաներուն:

Հանրագիտակ խորապէս զգածուած այս դառն կորուստեան առթիւ՝ իր սրբաբուրլոս ցաւակցութիւնները կը փութայ յայտնել՝ Այլի Տիկնոջը, զաւակացը եւ բոլոր ազգականներուն եւ պարագաներուն:

ԿԱՎՌՕՇԱՊԱՏՈՒՄ

ՆԵՂՈՒՐՏ ԷՔ

Օր մը իրիկուն Ժամը՝ 11էն վերջ Ղա-
լաթիոյ թիւնէլը նստեցէ՛ք:

Թրամուէյով ստիպողական գործի մը գա-
ցէ՛ք:

Թոթովախոս մարդու մը սիրային արկած-
ները մտիկ ըրէ՛ք իր բերնէն:

Սիրահարուեցէ՛ք կնոջ մը որ երբէք «ոչ»
չըսէ, ո՛չ ալ «այո»:

Առտուն անձրեւի վախով՝ հովանոցով ու
լաւթիկներով դուրս ելէ՛ք, և մինչեւ իրի-
կուն թո՛ղ կաթիլ մը անձրեւ չգայ:

Սիրաբանեցէ՛ք երեսունը հինգ տարու-
աղջկան մը հետ:

Խօսակցութեան բռնուեցէ՛ք տիկինի մը
հետ՝ որ գրաբար կը խօսի:

Գրաեջրատուն գացէ՛ք անթի բարեկամի
մը հետ, որ ձեր բոլոր մեղքները կուլ տայ՝
առանց չոր պանիրի կտորը իսկ ձեզի ձգելու:

Ներկայ գտնուեցէ՛ք մեր քարոզիչներէն
ո եւ է մէկուն քարոզին:

Հեռու տեղ մը երթալու համար նստեցէ՛ք
կառք մը, որուն ձիերը հազիւ հազ կարենան
ինքզինքնին քաշել:

Կարգուեցէ՛ք այնպիսի կնոջ մը հետ՝ որ
ան ալ իր կարգին նեղսիրտ ըլլայ:

Կարդացէ՛ք Փայլակին յօդուածները:

Ուշի ուշով հետեւեցէ՛ք եռաձայնի ու
քառաձայնի վիճաբանութիւններուն:

Նոր ջուլթակի սկսող ամաթէօրի մը սա-
լօնի մը մէջ զարկած կտորը մտիկ ընելու, և
յետոյ հիանալու հարկին տակ գտնուեցէ՛ք
հեղ մը:

Կաղանդի իրիկունը պղտիկ զաւակներ ու-
նեցող ձեր բարեկամներէն մէկուն տունը
գացէ՛ք, ուր լաճերը հայրիկին ու մայրիկին
գօմբլիմաններ պիտի արտասանեն:

Աղջիկտեսի օր մը աղջկան տունը գլտ-
նուեցէ՛ք:

Ձեր բարեկամին նորածին մանկիկին ձի-
չերը մտիկ ըրէ՛ք:

Սիրող-դերասանի մը մենախօսութիւնները

մտիկ ըրէ՛ք հաւաքոյթի մը մէջ, ուր աթոռ-
ներուն կը խօսի և պատերուն հետ կը պայ-
քարի:

Հայերէն ուղղագրութիւն չգիտցող գրողի
մը զրկած երկար մէկ յօդուածը նստեցէ՛ք
սրբագրել:

Ազգոր ձայն չունեցող օրիորդի մը մէկ ու-
մանը լսեցէ՛ք:

Ազգ. Հիւանդանոցի տարեկան նուագա-
հանդէսին գացէ՛ք:

Սինանեան-Մարեան վէճին հետեւեցէ՛ք և
վերջ ի վերջոյ իմացէ՛ք և ստիպուեցէ՛ք հա-
ւատալ որ Մարեանի մէկ մաղուրքան և եր-
կու բոլքան 90 ոսկիի գնուեր է Խալապի
տպագրիչի մը կողմէ, Խալապի պէս երկիր
մը՝ ուր ա՛յազին օբէրաներու իսկ տամնոց մը
չեն տար:

Դպրոցական մրցանակաբաշխութեան մը
գացէ՛ք, կ'աղաչեմ:

Չկարդացուած գիրքի մը քննադատու-
թիւնը կարդացէ՛ք ծայրէ ի ծայր:

Ձեր լեզուէն բառ մը չհասկցող կնոջ մը
հետ քանի մը ժամ անցուցէ՛ք՝ առանց դուք
ալ անոր լեզուէն բան մը հասկնալու:

Մեր վարժապետներուն ու վարժուհիներ-
րուն սուրաբք նայեցէ՛ք՝ ամսականին չա-
ռած մէկ օրերին:

Այս ամէնուն վրայ, եթէ նեղսիրտ չէք,
ասոնք կարդալով նեղսիրտ կ'ըլլաք:

ԿԻՆԵՐԸ ՊԷՏՔ Է ԾԽԵՆ

Գեղեցիկ կին մը որ կը ծխէ. — Ի՛նչ միւ-
սէական հմայք:

Պառու կին մը որ կը ծխէ. — Ի՛նչ տու-
տուական ճատալօղութիւն:

* * *

Ամերիկեան կառավարութիւնը արգիլե-
ր է կիներու ծխելը, պառաւ թէ դեռատի:

Ձեմ հասկնար որ սա՛ Եանքիները ի՛նչ
կ'ուզեն կիներու ծխելէն:

Ասիկա լոկ ... ամուսիններու գիտնալիք մանրամասնութիւնն է:

Եթէ ձեր քննարկն կ'երթայ՝ ձեր տիկինին քիթին բերնին վաթսուն փարանոց ծխախոտ հոտիլը, եթէ ձեր հաճոյքն է տեսնել՝ ձեր օրիորդ նշանածին աջածնաքի ցուցամատին ու միջամատին դեղնած ըլլալը, ձեր այս գեղեցկագիտական ըմբռնումին ո'չ ոք կըրնայ խառնուիլ, ո'չ ամբրիկացիները, ո'չ ալ Նաքիմացիները:

Ծխախոտի գործածութիւնը առողջութեան ու քունի կը վնասէ, կ'ըսեն:

Ասիկա կը հասկնամ մինչեւ աստիճան մը, որովհետեւ ես որ ի տղայ տիոց չեմ ծխած, առողջ օր մը չունիմ և բոլոր ծխախոտ գործածող մարդիկ ինչ աւելի փարայի տէր են:

Պարզ նախապաշարունակներ են ասոնք և կիները շատ աղէկ կը վալցեցնեն սիկառ իրենց չրթունքին:

— «Խնդրե՛մ, սըկէ սիկառ մը տո՛ւր ինձի ...» ըսող շնորհալի օրիորդը հազար տնգամ աւելի կարժէ քան այն աղջիկը որ կաթօ մը ուտել կը փափաքի ոկրամոլօրէն:

Ուտել և ծխել ...

Ապահովաբար, այս երկուքէն վերջինը աւելի բանաստեղծական է, մանաւանդ որ սիկառ մը 5 փարա կ'արժէ, մինչ կաթօ մը՝ 1 զրուշ:

Կաթօն երեւակայել կուտայ ակամայ ստամոքսի մարսողական գործողութիւնը, մինչ սիկառը՝ լոկ կարմիր կեռաս չրթունքներու ծոլ պարապում մըն է:

Ծխախոտի գոլորչիադարձ մուխերուն թաղանթներուն մէջ թաղուիլը գողտրիկ բազմոցի մը վրայ շատ աւելի կը վալցէ կիներուն, քան թէ էրիկ մարդոց:

Ըստ իս՝ էրիկ մարդոց արգիլելու են ծխելը և ծխախոտը, լոկ կիներու մենաշնորհը ըլլալու է, քանի որ աղւոր պլուտած սիկառ մը անոնց շնորհները կ'աւելցնէ:

Արգիլեցէ՛ք էրիկ մարդոց ծխելը, քանի որ հակագեղեցկագիտական երեւոյթ մը կը պարզէ այդ, բայց ստիպեցէ՛ք կիները որ ծխեն, որովհետեւ ծխող կին մը աւելի շնորհալի է միշտ, — ինչպէս երգած է Գր. Չոքրապ (բանաստեղծ):

(Միտի հիւանդութիւն ունեցողները կըրնան չծխել):

Մանաւանդ որ ծխախոտին մուխը ... սրամիտ յատկութիւնը ունի գլուխները դարձնելու:

Արդ, ինչ է մեր ուզածը կիներէն:

Անոնց գլուխները դարձնել:

Հետեւաբար երբ կիները սկսին ծխել, գլուխին ալ միասին պիտի սկսի դառնալ:

Եւ մենք մեր նպատակին հասած պիտի ըլլանք այս կերպով:

Բայց կ'երեւի թէ ամերիկացիները համոռմիտ չեն իրենց կիներուն գլուխներուն դառնալուն:

Ու արգիլել են իրենց կիներուն ծխելը ասոր համար:

Կրնաք վստահ ըլլալ որ ասկէ վերջը ամէն ամերիկացի կին պիտի սկսի ծխել, քանի որ ծխելը արգիլուեցաւ:

Այս խնդրին մէջ զարմանալի պարագան այն է որ մինչեւ այսօր ամէն նորութիւն Ամերիկայէն կուգար, կիներուն ծխելուն նորութիւնը բացառաբար մինչէ կ'երթայ կոր Ամերիկա:

ՏԵՍԱԿԵՏԵՐ

Եթէ կիներու հարցնեմք. —

Մենք՝ էրիկ մարդիկս՝ անգութ սրտաբաններ ենք:

Սրիկայ ենք.

Ստախօս ենք.

Չար ենք.

Ամենեւին մեր կիները չենք մեղքնար.

Անոնց գողտրութիւններուն հանդէպ միշտ ապերախտ կը դառնուինք.

Մեր կիները չենք յարգել և յարգել չենք տար.

Միայն մեր հաճոյքը կը փնտռենք.

Անոնց հոգին կը հանենք.

Սպասուհիի պէս կը գործածենք զիրենք.

Մարդու տեղ չենք դնել, հետեւին չենք խօսիր, չենք վիճաբանիր.

Իրենք հրեշտակներ են և մենք՝ սատանայ.

Մեր ամէն գործերը չենք հասկցնել իրենց.

Չոքուած ոչխարներ են անոնք միշտ, մինչդեռ մենք անոնց դահիճները.

Իրենց խօսքերուն ականջ չենք կախեր.

Չիրենք երեսի վրայ կը ձգենք և մեր ուզածին պէս կ'ապրինք մենք.

Խիղճ ըսուած բանը չկայ մեր քովը.

Առաջին օրերը միայն կը սիրենք, բայց անկէ վերջը՝ մեր սէրը օդը կը ցնդի.

Կիներու հետ մի եւ նոյն կերպով կը խօսինք եւ պատրաստ ենք ամէնուն գիրկը իյնալու :

Et patati et patata !

Իսկ երբ մեզի՝ երիկ մարդոցս՝ հարցնե՛ք՝ Կիները չարամիտ են,
Խաբեբայ են,
Ստախոս են :

Մենք հրեշտակ ենք եւ անոնք սատանայ :
(Եւ այս մասին բոլոր մեծ մարդերէն վըկայութիւններ ալ կը բերենք) :

Պատրաստ են շարունակ ամէնուն երեսը խնդալու :

Առտու իրիկուն միշտ կը տանջեն :

Անոնց հօգին նենգամտութեան խորվիճապ մըն է :

Թեթեւամիտ են ամէնքն ալ :

Մենք իրենց համար ա՛յնչափ զոհողութիւններ կ'ընենք եւ նորէն մեր յարգը չեն գիտեր անոնք :

Իրենց ծառաները, իրենց գերիները կը դարձնեն մեզի :

Մեզի չեն յարգեր եւ ուրիշներուն առջեւ ալ ծիծաղելի կը դարձնեն :

Խիղճ ըստած բանը չկայ քովերնին, եթէ խիղճ ունենային, է՛ն առաջ մեր վրայ պիտի խղճային :

Սարսափելի արարածներ են անոնք, ո՞րոնց ճանկը իյնողին խերը անիծուած է :

Միքրոսներ են անոնք, որ նախ մեր մարմինը կուտեն եւ յետոյ՝ մեր դրամը :

Աստուած կինը ստեղծած է այս աշխարհին վրայ՝ իբր էրիկ մարդոց քաւարան :

Կոկորդիլոսի արցունքներ են անոնց աչքերուն արցունքը :

Անկեղծութիւն ըստած բանը անոնց համար գոյութիւն չունի :

Et patati et patata !

Իսկ, իրականութեան մէջ, — էրիկ մարդիկ ալ բարի են՝ կիներն ալ :

էրիկ մարդիկ ալ չար են, կիներն ալ :

էրիկ մարդիկ ալ ստախոս են, կիներն ալ :

էրիկ մարդիկ ալ ապուշ են, կիներն ալ :

Եւ, կուզէ՞ք է՛ն չիտալը :

Ո՛չ էրիկ մարդիկ յանցանք ունին, ո՛չ ալ կիները :

Աշխարհ ա՛յսպէս է :

Միայն մեր յանցանքը թեթեւցնելու համար՝ կը սիրենք ուրիշին վրայ նետել մեր պակասութիւնները :

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

ԿՆԿԱՆ ՄԸ ՀԵՏ...

Իրիկուն մը Բըթի-Շանի պարտէզին մէջ հանդիպեցայ իրեն, իր ամուսինը եղող աւանակին քովն ի վեր : Իր նոր հարսի աչքառու արդուպարդին մէջ հարիւր անգամ աւելի աղւորեցած էր Վերոնիկ եւ որ բնականաբար իր վրայ կը հրաւիրէր պարտէզին մէջ շրջագայող բազմութեան ուշադրութիւնը եւ պագչոտ ակնարկները :

Յնցում մը ունեցայ զինքը տեսնելու եւ ինքը իր կողմէ չիկնեցաւ երբ նուագածուններու տաղաւարին առջեւը ստիպուեցայ բարեւել զիրենք : Ամուսնանալէն ի վեր իր կանացի շնորհները աւելի ցայտուն կերպով շեշտուած էին եւ մարմինը գտած էր այն կատարելութիւնը որով գեղեցիկ կըլլայ կին մը :

Հեռուէն լաւ մը դիտեցի զինքը եւ առաջին անգամ ըլլալով ամբարիշտ զգացումներ ունեցայ իր կեանքի երիտասարդութեան եւ զգլխի աղւորութեան հանդէպ : Երբեմնի Վերոնիկին մէջ կոյսը կը պաշտէի, այսօրուան Վերոնիկին մէջ կինը ցանկացի ... :

Նախանձի պէս բան մը զգացի այդ մարդուն ի տես եւ ամիսսացի մեր այն տղեղ սովորութեան վրայ որով Վերոնիկին պէս մարգարիտները ատանկ հարուստ խողերու առջեւ կը նետենք :

Ցանկութիւնը, տրիփը կրծել սկսան կուրծքս եւ այդ տեսարանէն աւելի երկար չի տառապելու համար առի քալեցի պարտէզէն : Անկէց ի վեր մէյ մ'ալ Վերոնիկին երեսը չի տեսայ :

Այդ թուականէն ի վեր տաս տարիներ անցած էին երբ օր մը, անակնկալ կերպով դէմ առ դէմ գտնուեցանք նորէն եւ ի՛նչ տարօրինակ պայմաններու մէջ, Աստուած իմ, Վերոնիկը հո՛գ, այդ տան մէջ, ո՛հ, կեանքը ի՛նչ զարմանալի զուգադիպութիւններով լեցուն է ... :

Իրիկնամուտի մը Բ... փողոցէն անցած միջոցիս, պատուհանէ մը՝ արուեստակեալ կերպով խարտեաշ կին մը անուեստ տալով նշան կընէ որ վեր ելլեմ : Ուրկէց ո՛ր այդ կինը անուեստ պիտի գիտնար, լաւ մը կը դիտեմ զինքը, բայց չեմ ճանչնար, քիչ մը կը

վարանիմ, ճամբաս շարունակել կուզեմ, բայց կինը պաղատագին կերպով նորէն զիս վեր կը կանչէ: Չորս կողմս կը նայիմ... առ ի զգուշութիւն և հետաքրքրութիւնս յագեցնելու համար դուռը կը զարնեմ և կելլեմ վեր: Սանդուղներուն կէսին չի հասած, գէր կնոջ մը պարարտ թեւերը վզիս կը պլլուին...:

— Լեւոն, Լեւոն, կը բացագանչէ...:

Շուարած ատանկ թեւատարած ընդունելութենէ մը, առանց բառ մը արտասանելու կը հետեւիմ իրեն և կը մտնեմ սենեակ մը ու դուռը աճապարանօք կը գոցէ:

— Լեւոն, չի ճանչցար զիս, կը հարցնէր:

— Ոչ, Տիկին, սակայն հոգ չէ...:

— Չէ, չէ, իրաւ չի ճանչցար զիս:

— Կերդնում թէ ոչ:

Երկու քայլ անդին կերթայ և ձեռքերովը մազերը ճակտին վրայէն վեր առնելով.

— Հիմայ լաւ մը նայէ և ըսէ թէ ո՞վ եմ:

— Ու՛ր ըլլալնիդ հաւատացէք որ չեմ կրնար կոր դտնել, բայց ինչ որ կը գտնեմ... գեղեցիկ կին մ'է դիմացինս:

— Միշտ մի եւ նոյն Լեւոնը, իրաւ չի ճանչցար զիս:

— Կերդնում թէ ոչ:

— Լաւ մը նայէ:

— Յիշողութիւնս այնքան տկար է, տիկին...

— Չարմանալի բան, աղէկ մը դիտէ զիս, 95ի աչքերովդ:

— Կը ցաւիմ...

— Միտքդ բեր կապոյտ պլուզ մը:

— ...

— Աչքերուս մէջ լաւ մը նայէ...

— Գեղեցիկ են, Տիկին՝ չատ:

— Բան մը չե՞ն ըսեր քեզի:

— Ինչպէս չէ, ընդհակառակը կերգեն և կարծես կըսեն. — մեր տիրուհին գիտե՞ս ինչ աղէկ կնիկ է...:

— Չար: Հապա այս շուրթները... սակայն և այնպէս ճանչնալու ես ասոնք, և զանոնք իմի՞ններուս մօտեցնելով և հազիւ կարենալով զսպել աչքէն դուրս ցատկող արցունք մը, ականջս ի վար կը փարտայ՝ Սիրեցի քեզ և դեռ միշտ:

— Վերոնիկ...

Ինքն է, յանկարծ գարշանքի պէս բան

մը կզգամ և երկու ձեռքով քիչ մը անդին կը հրեմ այդ *trésse incarnat* բուրող մարմինը: Վերոնիկը այս տան մէջ. չէ՛, սխալ բան մը կայ, գէշ կը տեսնեմ կոր, երա՛զ է արդեօք. — բայց ոչ, ահա դիմացս կը խօսի:

— Այո, Լեւոն, ես եմ, կը հեծկլտայ և կսկսի խոշոր խոշոր արցունքներ թափել գլուխը ուսիս կոթնցնելով:

Կը բռնեմ ձեռքերը որ կրակի պէս տաք են:

— Վերոնիկ, իրաւ դուն ես, հաւատալի գար կոր, ըսէ:

— Այո, Վերոնիկն եմ, բայց կօրսուած Վերոնիկ մը, դժբաղդ արարած եմ, ամօթահար Վերոնիկ մը, խեղճ ողորմելի Վերոնիկ մը:

Այս խօսքին վրայ կը յուզուիմ և կուզեմ այս անկումին պատմութիւնը իմանալ:

— Նստէ, Վերոնիկ, սրբէ այդ աղւոր աչքերդ և խօսի՛ք:

— Քօնեաք մը կառնեմ:

— Չէ, չնորհակալ եմ:

Քօնեաք... այդ երկվանկը բաւական եղաւ զգացնել տալու ինծի թէ ինչ անընկալաբարելի փոփոխութիւն մը կրած էր երբեմնի պաշտած Վերոնիկս: Երկու ձեռքերը ձեռքերուս մէջ կառնեմ և կարեկից ու ներողամիտ ոգւով կըսեմ իրեն.

— Սա պատմութիւնը ըրէ տեսնեմ, մի՛ լար սակայն, նախկին բարեկամներ ենք մենք, անկեղծօրէն, առանց բան մը պահելու պատմէ ինծի:

— Պատմութիւնս սկսելէ առաջ բան մը պիտի խնդրեմ քեմէ, սա կուրծքիս կոճակները քակէ:

— Շատ շուտ կերթաս կոր, Վերոնիկ...

— Չէ, չէ, պատմութիւնս սկսելէ առաջ, ինկած կնկան մը պատմութիւնը, կուզեմ ապացոյց մը տալ քեզի թէ հակառակ այս դժբախտութեանս, դեռ շատ մաքուր բաներ աւելցած են քու ճանչցած Վերոնիկէդ, քակէ:

Մետաքսէ բաց վարդագոյն քօրսած մըն էր հագածը կեղծ ոսկի պզտիկ կոճակներով, որոնց հինգ վեցը դողդղալով քակեցի, մէջէն՝ սեւ սաթէն քօրսէի մը եզերքէն էլիօք-րօք շապիկ մը իր շրթունքները կը ցուցադ-

բէր: Շապիկին և մօին մէջտեղ ոսկեգոյն ե-
րբզի մը ծայրէն կախուած քառակուսի փոք-
րիկ հոտի քսակ մը այդ ճերմակ կուրծքին
վրայ կը տատանէր:

— Բրցուր այդ սաշէն և տես թէ մէջը
ինչ կայ:

— Tréfle incarnatի փոշի անշուշտ:

— Ձէ, բաց, պիտի տեսնես:

Այս գործին մէջ հանելուկ մը կար և հետ-
զհետէ աւելի հետաքրքրուած կը խղտեմ այդ
սիրուն բարձիկը: Մէջը թղթի կտոր մը քիչ
մը դեղնած քրտինքէ:

— Կրնամ կարդալ:

— Ինչո՞ւ բանալ տուի հապա:

Ձեռագիրս, այդ քառեակը, « Սիրեցի
քեզ ... »:

— Աս' ինչո՞ւ պահեր ես: Վերոնիկ:

— Կը յիշես ըսած էի քեզի թէ քու յի-
շատակդ դրօշմուած պիտի մնար սրտիս մէջ
և թէ անոր պիտի դիմէի մեղմելու համար
սաստկութիւնը այն ստառապանքներուն որոնք
ինծի կ'սպասէին այդ չի սիրած մարդուս հետ
կարգուելէս ի վեր:

— Խեղճ աղջիկ, բայց չըսիր թէ ինչպէս
եղաւ որ հոս կը գտնուիս, այս տգեղ միջա-
վայրին մէջ:

— Կոյնէ քիչ մը ինքզինքս գտնամ և
պիտի պատմեմ:

Քաջութիւն տալու համար իրեն բարեկա-
մակսն և գուրդուրանքի հարուածներ տուի
ուսին և չոյել սկսայ իր առատ բայց ներ-
կուած մազերը, իրաւ, որքան փոխուած էր:
Իր աչքերը երբեմնի, այնքան պայծառ, այն-
քան անմեղ, այնքան ջինջ, հիմայ յոգնած
ակնաբկներ ունէին, սեւ-կապոյտ գիծերով
չըջանալուած և բոլորովին կորսնցուցած էին
իրենց այն ատենուան երազկոտ ազդորու-
թիւնը: Այտերը, ներկերով բեռնաւորուած,
չունէին այլեւս իրենց նախկին թարմութիւնը
և այլանդակ կերպով իշայտ կը բերէին ապ-
րելու եղանակը այդ կորսուած էակին:

Դիրքած, չատ գիրքած էր Վերոնիկ այն
տեսակ մը գիրութիւնով զոր կանոնի բերե-
լու համար կիները հոգին կը հանեն սեղմի-
րանին: Իր ամբողջութեան վրայ չեմ գիտեր
ինչ մը եկած էր, զոր կիները կը վաստկին
երբ արդէն ամէն բան կորսնցուցած են պա-

տիւէն սկսելով ...: Ո՞վ կըսէր թէ տասը
տարի առաջ չուշանի պէս մաքուր այդ աղ-
ջիկը որուն լուսարձակ դէմքին վրայ madonaf
մը անուշ սրբութիւնը կը ցոլար, պիտի դար
պիտի իյնար հոն ուրկէ ներս մտնելու համար
կիները կին ըլլալէ կը դադրին կանացի մար-
միններ ըլլալու համար միայն:

Սիրտս ճմուեցաւ երբ աչքերս սենեակին
չորս կողմը պտըտցուցի ուր ամէն բան կը
մատնէր ցոփակեաց վիճակը այդ հէգ կնկան:
Քոնսոլին վրայ հոտեղէնի շիշերուն հետ գի-
նիի սրուակներ, ակռայի փոշին տուփին քով
պարապ գաւաթներ և զոյգ մը ճերմակ ձեռ-
նոցի մը քովիկը սեւ ժանգոտած tire bouchon
մը: Հաստ աղտոտ վարագոյրներ կարծես ար-
գիլել կուզեն արեւին որ իր ճառագայթները
թափանցել չի տան հոն:

Ասղին անդին նետուած չըջաղեալներ,
հապճեպով հանուած jupon մը դեռ գետինէն
չէ վերցուած, մէկ երկու դլխարկ հոս ու հոն,
սփառքիներ անհոգ կերպով սենեակին մէկ
անկիւնը նետուած, չորցած և թարմ ծաղիկ-
ներ գաւաթներու մէջ և այս ամէնուն վրայ
տեսակ մը հոտ որ նողկանքդ կը գրգռէ:

— Ինծի սիկառէթ մը տուր, կը հրամայէ
Վերոնիկ և մէկ ոտքը մէկալին վրայ նստե-
լով՝ պիշ պիշ ինծի կը նայի:

— Սրդեօք ինչ կը մտածես կոր իմ վրաս,
զիս հոս տեսնել մտքեդ կանցնէր:

— Միակ բանը որ մտքէս չէր կրնար
անցնիլ երբէք՝ այն ալ քու հոս գտնուիլդ է
այս պահուս: Բայց ըսէ թէ ինչպէս եղաւ,
ամուսինդ ո՞ւր է:

— Այդ մարդուն անունը միտար, կա-
ղաչեմ, որովհետեւ միակ յանցաւորը ան է,
ես անոր երեսէն է որ այսօր այս վիճակին
մէջ կը գտնուիմ, կերպնում զաւկիս գլխուն
վրայ:

— Ձաւա՞կ ալ ունիս:

— Հապա, աղջիկ մը, ութը տարու ե-
ղաւ հիմայ:

— Ան ալ հե՛տդ է:

— Աստուած չընէ, Պօլիս մայրապետնե-
րուն քով ձգեցի, հրեշտակի պէս աղջիկ մըն
է, տեսնես, հա՛, աղէկ միտքս եկաւ, գի-
տե՞ս անունը ինչ է:

— Ուրկէ՞ց գիտնամ:

— Կը յիշե՞ս, որ մը ինծի վալսի նոթայ մը ընծայ բերիր, նոր ելած էր այն ատեն, անոր անունը դրի գաւկիս. Տէլիցիա, աղւոր անուն չէ՞:

— Շատ աղւոր է, մանաւանդ որ օրին մէկը անունը փոխելու պէտքը չունենար, նայէ առաջ Վերոնիկ էիր, բայց հիմայ Պէ-

աթրիս եղեր ես, քիչ մը առաջ դուն չըսիր:

Այս ըսածէս չախորժեցաւ և ծուռ ծուռ երեսս նայելէ ետքը նորէն սկսաւ լալ:

Կէս գիշերը քանի մը ժամ անցած էր երբ պատմութիւնը աւարտեց Երբեմն խնդալով և ստէպ լալով:

Ահա երկու բառով իր պատմութիւնը:

Ամուսինը, այդ Նիկողոս աղան, իր ամբողջ հարստութիւնը սակարանին մէջ խնդ չահաղիստութիւններով փճացնելէ ետքը սկսած էր թղթախաղի և այդմութիւնը այնքան բուռն, այնքան խորին ազդեցութիւն մը ըրած էր վրան որ ալ կորսնցուցած էր պատուոյ տարրական սկզբունքներն իսկ, այն աստիճան որ իր կինը ստիպած էր տեսակ մը գրկաբաց ընդունելութիւն ընելու հարուստ մարդերու զորս ինքը ձեռքովը տուն կը բերէր անոնցմէ ստակ խլելու ցած գիտաւորութեամբ:

Երբ այդ կեանքը ալ չէր կրնար չարու նակուիլ Պոլսոյ մէջ, Պէյրութ գացած էին ուր Նիկողոս աղան կը կարծէր աւելի գիւրին կերպով շարունակել իր ապրելու այդ ամօթալի եղանակը: Բայց հոն ձախորդութիւն ձախորդութեան վրայ եկած էր և երբ այն աստիճանի հասած էին ուր օրերով անօթի մնալ ստիպուած էին, յանկարծ կինը երեսի վրայ, գրեթէ փոլոցին մէջ ձգելով, գլուխը առած և ուրիշ հեռաւոր տեղ մը գացած էր:

Վերոնիկ որու ծնողքը տարիներ առաջ մեռած էին, անոք, անօգնական կը մնար Պէյրութի պէս հեռաւոր քաղաքի մը մէջ, ուստի այդ ճամբան բռնած էր ճիշտ այն կինը, որուն պէս որոնք քաջութիւնը չէին կրնար ունենալ և կամ չէին ուզեր ունենալ աւելի դժուար բայց աւելի պատուաւոր կերպով իրենց ապրուստը ճարելու:

Ես շատ պարզ կերպով կրկնեցի քեզի իր պատմութիւնը, մինչդեռ ինքը անանկ ման-

րամասնութիւններ տուաւ և անանկ տրտմազին կերպով պատմեց իր գլխուն եկածները՝ որ յուզմունքով մտիկ ըրի իրեն և եղան վայրկեաններ որ դիմացս տեսնել կարծեցի զՂլացող Մագթաղինէի մը արգահատելի պատկերը:

Երբեմն իրեն համար ունեցած անհուն սէրըս էր գուցէ պատճառը որ իր պատմութեան ամէն օրտալոյդ փուլերուն իրեն հետ լացի տղու պէս:

Այդ կինը մեր աղտոտ բարքերուն մէկ զոհն էր և նոյն իսկ այդ կորսուած վիճակին մէջ իր ընթացքը ներելի գտայ, քանի որ ամբողջ յանցանքը իր ծնողացն էր որ իրենց աղջկան կամքին հակառակ ամուսնացուցած էին զինքը դիմացին ելող առաջին անգամին հետ:

Երբ առտուն դուրս ելայ այդ տունէն, կարծես տեսակ մը վրէժ լուծած էի մեր բարքերու մէկ յուր կողմէն:

Մեկնած պահուս Վերոնիկը սանդուղնէրուն վրայ կը պոռայ:

— Մէյ մ'ալ գաս նէ, հետդ մէկ չի՞ Հուպիկանի խախլէն բեր, չի մոռնա:

Այս կինը ալ աղատում չունէր:

Ահա, բարեկամ, վէպս որ ինչպէս ըսի, կրնաս քու կողմէդ գրի առնել:

Քոյո

ԼԵՒՈՆ

Այս պատմութիւնը — որ իրական է — շատ բան պիտի կորսնցնէր իր պարզ հրապոյէն եթէ բառ մը իսկ փոխէի: Ուստի հրատարակեցի զայն այնպէս՝ ինչպէս որ զբերուած էր ինծի:

Ե. ԱԼՓԻԱՐ

ՉԵԿՈՅՑ

Պատիւ ունինք ներկայացնել Ատա-բազարի Պատ. Հասարակութեան մեր նոր դորձակալը՝ Մեծ. Սարգիս էֆ. Խաչուկեան, որուն կրնան դիմել ամէն անոնք՝ որոնք կը փափաքին առանալ Համրագիւղի:

Նոյնպէս Իզմիտի համար գործակալ կարգած ենք՝ Մեծ. Արամ էֆ. Չաքմագեանը, որուն կրնան դիմել և բաժանորդագրուիլ մեր միակ զաւեշտութիւնը:

Կը խնդրուի բաժնեգնի մասին պէտք եղած դիւրութիւնը չի զլանալ իրենց:

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրական հրապարակի վրայ օրուան այժմեութիւն ստացող խնդիրն է՝ ամլութիւնը, որ թարգմանի թէ՛ մեր կրները այլ եւս ... կօլօսեալ չեն նստիր կոր, կամ թէ մեր աքաղաղները օտար հաւնոցներ կը թառին, երկուքէն որը որ կ'ուզէք:

Արդարեւ այս ցաւալի (?) պարագան անշուշտարկի չ'էր կրնար անցնիլ և ուրախալի (?) է որ մէկէ աւելի անձեր, այսօր անով զբաղիլ սկսած են: Եւ քանի որ փոփոխութիւնը, բժիշկը, գրագէտը, խօսեցան, գրեցին, ճառեցին անոր վրայ, ինչո՞ւ Համբարձումսակ, ըստ իւր կարգին չի զրազէր իրմով: Ուրեմն մըտիկ ըրէք:

Ամլութիւնը իրաւ է թէ վերք մըն է մեր հիւանդ մարմնոյն վրայ և խոշոր վերք մը, բայց անոր դարման խորհիլը գիտէք ինչի կը նմանի. հոսանքի դէմ պատուար մը շինել ջանալու, որ ինչ կերպով ալ ըլլայ, անօգուտ: Հետեւաբար երբ կը վիճինք այնպիսի ընտանեկան նիւթերու վրայ որուն ապարդիւն ըլլալը գիտենք և անդին դարմանի կարօտ ամուսնական խնդիրներ երեսի վրայ կը թողունք, գիտէ՞ք մեզի պէսներուն ինչ կ'ըսեն, պօս մարդեր, և արդարեւ պօս մարդիկներ ենք, բառին ... լեցուն առումով:

Հիւանդութեան մը դարմանը գտնելու համար նախ անոր միջոցը գտնել հարկ է անշուշտ, այսպէս ամլութեան մանրէն ... զբամոթիտն է ըսաւ փաստաբանը, ո՛չ, կամաւոր ամլութիւնն է ըսաւ բժիշկը: Ո՛չ այս ո՛չ այն, նորաձեւութիւնն է պատասխանեց անդիէն երրորդ մը: Մինչ ես խոնարհաբար, առանց բժիշկ մը ըլլալու — թէեւ կան մեր մէջ գրագէտներ՝ որք առանց Հիբոկրատի աշակերտ ըլլալու՝ Եսկիւլապի թոռներուն դատ տալու կ'եղեն: Ուրիշ բան է թէ ԴԱՍը իրենց գլուխը կ'անցնի, այո՛, առանց փաստաբան կամ բժիշկ ըլլալու, պիտի ըսեմ թէ աւելի հեռունները պէտք է երթալ ամլութեան «պագիլ»ը գտնելու, և համոզուելու համար թէ ի դուր աշխատած ենք: Իրաւ է թէ քիչ մը հոգեբանութեան վարպետները անհանգիստ պիտի ըլլան այսպէսով, բայց

հոգ չէ՛, քանի որ մենք անոնցմէ գիշեր ցերեկ անհանգիստ ենք:

Սակաւածնութեան ամէնէն գլխաւոր պատճառը զբամոթիտէն՝ կամաւոր ամլութենէն՝ աւելի նորաձեւութիւնը համարելով երբ քիչ մը աւելի հեռուն պրպտենք՝ բացայայտ կը գտնենք այս վերջնոյն ծնունդ տուող միջոցը, այն է ԿՆՈՋ՝ ԳԵՂԵՑԻԿ ԵՐԵՒՆԱԼՈՒ ԱՆՇԷՋ ՓԱՓԱՔԸ: Փափաք մը որ ԲՆԱՅԻՆ է, և ինչ որ բնածին է՝ անդարմանելի է աւաղ:

Հետեւաբար, քանի որ կրնը գեղեցիկ երեւալու ինքնածին տենչը ունի, ակամայ պիտի սիրէ յաւիտեան սին զարդարանքը, նորաձեւութիւնը, որուն համար ուրիշ բան պէտք չէ այլ դրամ: Ամուսնութեան քանգիտան գոհացում տալու համար իր տպագայ կէտին խօլ կուզեմներուն, պիտի պահանջէ զբամոթիտը, զորս ցնծացող Եւայի թոռները պիտի նստին ... կօլօսեալ, մինչ վճարելու անկարողներ, որք մեծամասնութիւնը կը կազմեն դժբախտաբար, սեփիւն անկիւնը պիտի ընեն տիտիկ: Ուսկից յառաջ եկած է, կուզայ և պիտի գայ ամլութիւնը:

Այս պարագաներուն տակ անօգուտ չէ՞ք գտնել ու եւ է ջանք:

Ուրիշ բան է թէ հակառակ ամենայնի մեր յորդերը շատ թեթեւաբարոյ և հեռի են տիպար մօր մը յատկութիւնը ունենալէ, որոնց համար դարման խորհիլը մասամբ սպեղանի մ'է ամլութեան վերքին:

ՄԻՕՋՈՒԽ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹՈՒԼԲԵՐԱՆՈՒԹԻՒՆ

ԻՄԱՅԱՔ ...

ՅԱԶՈՐԻ ԹԻՒՈՂ

ՄԻՇՏ ՅԱԶՈՐԻ ԹԻՒՈՂ

Յ. ԱԼՓԻԱՐ

Ե. ԹՕԼԱՅԵԱՆ

ՌՈՄԱՆՈՍ

ԲՕՊՈՍ

ՎԱՀՐԱՄ ՍԸՎԱՃԵԱՆ

և

Բուսին գիւղերը

Բրգայիւր յօգուած մը

ԼԻԼԱԵ

ՊԱԼՕԻՆ ԵՐԵՍԷՆ



րեցկինը բռնի պաշիկ ընող քահանան, «աս ալ ասանկ օր մըն է» ըսելով սիւսլան սուռաթլը վաթսուներեք կինը համբուրող ծերուկը, հայրիկին գրպանէն դրամ գողնալով՝ պալօ վաղող միւսիւն, ամէնքը քնանալէն վերջը տիկինին հարսնութեան ֆիստանը կռնակը անցունելով աշծիին հետ մասքէ ըլլող Եալովացի սպասուհին, էրկանը ծոցէն փախելով կէս գիշերին ծմբի մը հետ փողոց իյնող խայնար ջուր տիկինը, վարժապետին հետ խօսք մէկ ընելով Բերա անցնող վարժուհին, «սանկ մէյմը դառնանք» ըսելով՝ մինչեւ լուս պարահանդէսները ատեն անցնող նշանածները, «բարեկենդան է վէօվ վէօրի» ըսելով մոմճի կնկանը փաթթուող ժամկոչ աղբարը, «չորս տարի է էրիկս ձեզիւ եմ, ո՞վ որի» ըսող և միս մինակ փողոցները սիրորսորդութեան ելլող տիկինը, «երկու տարիէն ետքը սուգ մուք նայողնեքէն չեմ» ըսելով՝ դրացի միւսիւնին հետ պուսալները ժամանակ անցնող որբեւայրին, «թօխումի երթալու չենք ես, մասքէ ըլլանք պէլքի մէկը կը ճալակողտենք» ըսող և միսերնին մոս մոս տուն դարձող կէշկինները, և վերջապէս զորն ասեմ կամ զորն խոստովանիմ, զի բազում են գլխէ ելողք՝ ի խընդիւր մասխաղութեան, որոնք բոլորն ալ մեծ պահոց այս ապաշխարանքի օրերուն կծկուած տանը անկիւնը, որը սաղմոսերգութեամբ, որը սանճիով, որ մէկը բիւռկաքիվով և շատեր ալ կռնակնուն հառտալ մայեա պտըտցնելով կգրաղին:

Բարեկենդանը որ թէեւ օրացոյցին մէջ նշանակուած փոթորիկներէն չէ, սակայն պէտք է ըսել թէ չալլազ Ֆուռքուցասիէն և կամ կիւն Տօնիւմիէն շատ ու շատ աւելի աւերիչ հանգամանք մը ունի:

Մեծ պահոց առաջին շաբթուան համար մտադիր էի Գործք Առաքելոցէն հատուած մը դնելով անոր մեկնութիւնը ընել այս է-

ջերուն մէջ, բայց նկատելով որ Հանգագիտակ և անոր Լիլան կարդացողները ճոխ սեղանէն վերջը մեծարուելիք մալակալէն կախորթին, ուստի փափաքեցանք գոհացում տալ իրենց՝ նկարագրելով չիք միւսիւնի մը վարպետ-որդիութիւնը, իբր պարահանդէսի յիշատակ:

Գիտենք, գիտէք, գիտեն թէ՝ Բարեկենդանի շաբթուն ամբողջ Բերաի տունները մէկ մէկ օթէլ կը դառնան — բացառութիւն երկուշաբթիի մշուշը, երբ նոյն բանը պատահեցաւ — Պոլսոյ չորս հովիւրէն ընտանիքներ խաբու խաբամա կուգան կը լեցունին տունները սէտիւրներու վրայ, երեքերու մէջ պառկել ստիպելով բուն իսկ տանտէրները:

Հիմա տեսէք թէ Բերա երթալը, բարեկենդանը հոն անցնելը, գլխէ ելլալով՝ դրամէ ալ ելլալը, և պալօ երթալով ալ ետին պոչ մը անցնելով ետ դառնալը ինչ փորձանքներ կը բանան ծնողաց գլխուն, որոնք՝ «ճահիլնիս օր տեւնայ» ըսելով տեղի կուտան կը համակիրպին և վերջէն կը տուժեն:

Սեղոս աղան չէք ճանչնար անանկ չէ՞, ես ալ չէի ճանչնար, բայց գլխուն եկած փորձանքը բերնէ բերան տարածուելով՝ ամէն մարդ ճանչցաւ, ինչպէս ես, և ինչպէս դուք, որ հիմա մօտէն պիտի իմանաք իր վրայօք:

Սեղոս մարդը համակիրպելու համար իրեններուն՝ բարեկենդանի շաբաթ օրը Բերա, ազգականի մը տունը մտալով՝ գիշերը աղջիկը պարահանդէս կը տանին, կիրակին ալ հոգ անցնելէ վերջ, երկուշաբթի՝ Ստոխուեայէն ալ պակաս չի մնալով, երեքշաբթի առաւօտ տուն կը դառնան, երբ չորեքշաբթի առաւօտ լուսնալուսն ծայր կուտայ պատմութեան է՛ն զուարճալի իրողութիւնը:

Ինչպէս է՛ն մեծ գողութիւնները, է՛ն ճարպիկ ձեռնածուները առանց ընկերի չեն կրնար ըլլալ, նոյնպէս սիրալին խնդիրներու մէջ ալ առանց երկրորդի մը միջնորդութեան յաջողութիւնը անկարելի կըլլայ միշտ:

Չորեքշաբթի իրենկուն երբ Սեղբոս աղա տուն կը դառնայ, կինը զինքը դիմաւորելով,

— Չես ըսեր Սեղբոս աղա, Նաոթիկին ալ ծանրը սոյն պառկեցաւ ...

— Քնատութենէն ըլլալու է, տիոր լուս քիթէի պէս ցատկողը՝ ութ օրէն անճախ կարթընայ ...

— Ինչ կրօսա կ'որ ... կրակներուն մէջն է եւալրուս ...

— Կոնակին աղով իլիմոն ըրէ, ոտքերն ալ ճուրը գիր, պիթտի կիթտի ...

— Քա ճանր՝ մ'ի՛նչ կէնիչ մարդ ես, չօճուխը ինքիզինքմէն պէխապար պառկեր է, եկուր մէյ մը նայէ տէ կը տեսնաս ...

— Ինտոր քի սէպէպ եղար առիւր տարիւր գուլիսէ հանեցիր նէ անանկ ալ ճարը գտիր, ըսելով կոչիկները կը հանէ շիտակ վեր կելլայ, որպէս զի աչքովը տեսնայ ...

— Ինչ ես եղեր քա, ըրաքէն սիւնկէր ինկաւ, հա՛, ելիր բոլքա մը տահա խաղա քի ասնի ...

— Աման հայրիկ, չախային վախիթը չէ, ինքզինքս խայիպ կընեմ կոր ...

— Դուն խայիպ ընեսնէ մարդը կը գըտնայ, ինտոր քի քեզի առ հալը ձգեց նէ թող մայիճէն ալ ինք մոմտայ ...

— Քա ճանրմ, հէքիմ մը բերենք մէյ մը նայի, աս ասանկ դէմերնիս առնենք նատի՛նք պիտի կըսէ Տիկինը չուարած ...

— Իրաւ էս, սալաթան եաղ քացախսըզ չուտուիր, հէքիմին վիզիթան ալ, ան է իշտէ բարեկենդան իւսթիւ ...

Աման հայրիկ, աչքիս խաւերը կը դառնան կոր, սիրտէս հոբ տէյի բաներ մը կելլան սըտեզս կուգան կէնէ վար կիշնան կոր ...

— Ազջիկս ան պալօին սէրբինթին է, չիյտնա լոտոս ֆուռթուռնաիէն հտըր ծովը էքէյի վախիթ կերերտկայ քի էօյիւ տէնիզի կըսեն ...

Ու դեռ պիտի շարունակուէր խօսակցութիւնը, յանկարծ դրացի տուտու մը ներս մտնելով,

— Քա եւալրուս, չորնամ, ի՛նչ է եղէր, քա ի՛նչ ըրիկ չոճօխս ... աչկս ելլայ ըսելով օրիորդին կը մօտենայ ու կսկսի համբուրել ... վախ եւալրում ...

— Ի՛նչ գիտնամ քուրուկ, պալօին գի-

չերէն պէրի թիւղիւ մը եղաւ չոճօխս, գիտես քի պոնեցին կետինը դարկին, աս ասանկ մահման քրտինքներուն մէջն է ...

— Էյ խաչ քի խենդ էք դուք, աս հալը կը տեսնաք կոր տէ մէկը բերենք ցուցունենք չէք ըսեր կոր ... աչկ օչոն սիրտ ...

— Էյ, քա ո՛վ պերենք, ի՛նչ գիտնամ, ո՛ր հէքիմը աղէկ է, չեկան եաղլըզ իլաճ մը տան տէ ճողի մախսրմս ...

— Հայտէ՛, աղէկ դրացին մը քրոյմէ էվէլ է, բաղդ ունիք եղէր քի աս գիշեր տօթթօռը մեզի է, երթամ կանչեմ տէ մէյ մը նայի, հէմ ինծի նայէ՛, վիզիթայ ալ մի տաք, տղան անտեղուանքը չէ դէրէ, ի՛նչ կըլլայ, բան մը քի արանսըզ գտնուեցաւ ...

— Աստուած օրերդ շատ ընէ քուրուկ, խող պոնես օսկի կըյրի ի՛նչ ըսեմ, գայ նէ աղէկ ...

Մինչ երկու կին այսպէս կը խօսակցէին, հիւանդ օրիորդը անկողնին մէջ նստելով կսկսի թափած մազերը վեր առնել և հայելի մը կուզէ ...

— Ի՛նչ է ան եւալրում, մենք գիտէինք քի մինակ ակոսին ցաւն է քի տիշծին ծանր առնելուն պէս կը կտրի, աս տօթթօռը պիտի գայ ըսելնուն պէս թուվալէթի ելար, կըսէ Սեղբոս աղան զարմացած ...

— Աման հայրիկ բէք նէկիթէ եմ տէ ...

— Ի՛նչ ես, ի՛նչ ես ...

— Նէկիթէ, հանի բէք ձգձգած եմ ըսել ուզեցի ...

— Սուոր վրան չալ մը տուէք քա, կէօքսին ալ խալլու մը դրէք, չորս դին օթման է ...

— Ան դարար չունի, տօթթօռները անտեղուանքը չեն ըլլար, անոնց համար հիշ դարար չունի աստանկ երեւնալը ...

— Բէք էյի, ես չէի ըսողը, սըտեղը կազ մըն ալ բերէք քի լուս ըլլայ ...

— Կէնէ լեզուիդ մաքինան մի բանեցունէր Սեղբոս աղա, հիմա եանկըն վար կը պոռամ ...

Շատ չի քշէր, դուռը բացուելով հաւին նոր ածած հաւկիթին դեղնուցին քար հանելու չափ սուլու միւսիւ մը լո՛ւ՛ր՝ սննեակէն ներս կը մտնայ և որուն կը հետեւի դրացնուհին ...

— Բարե՛ւ... բարե՛ւ... բարե՛ւ...

— Ասծու բարին եավրուս, Աստուած մէկ օրդ հազար ընէ քի աս գիշեր հոս գըտնուեցար տէ աղջկանս ազատլաման պիտի ըլլաս, կըսէ մայրը:

— Այգքան մի սրտնեղիք տիկին... հիմա տիակնոսթիք մը ընեմ, ձեզի լուր կուտամ... Ը... Թէ... Ը... մատմազէլը ինչ Ը... մալատի է կը տառապի... կըսէ ու գլխարկը հանելով մէկ կողմ կը դնէ, ինքն ալ մահճակալին մօտնալով աթոռի մը վրայ կը նստի, օրիորդը կը բարեւէ, բաշկերակը ձեռքը կառնէ ու կսկսի մօրը հարցումներ ուղղել:

— Քանի տարեկան էք տիկին...

— Ես... ինչ գիտնամ, քառասունը հինգ մը կամ, եարուսիս տէօքիւմիւին քառասունը վեցս պիտի մտնամ...

— Լա՛ւ... նստած տուներնիդ ձե՛րն է թէ վարձքով կը բնակի՞ք...

— Չէ՛, մերն է, պապայէս մնացած է տէ կէսը իմ վրաս է կէսն ալ աղջկանս դըրախօմաի համար պիտի տանք...

— Շատ լաւ, դուք ընդհանրապէս հոս կը բնակիք թէ ոչ ուրիշ տեղեր ալ կենալու կերթաք երբեմն...

— Ինծի նայէ միւսիւ տօքթօն, կը ձայնէ Սեղրոս աղան, որ եղած հարցումներէն բան մը չի կրնալ հասկնալուն բարկութենէն կաս կարմիր եղած էր:

— Աֆ կընէք ամա հիւանդը աղջիկս է, նստած տուներնիս չէ...

— Ներեցէ՛ք, մենք նոր բժիշկներս, մինչեւ որ լաւ մը չի հարցափորձենք չենք կըրնար ո՛ր եւ է դեղ տալ, խնդրեմ շարունակեցէք հարցումներուս պատասխանել:

— Այս օրերս դուք, այսինքն այս բարեկենդանի օրերը հո՞ս անցուցիք չէ թէ ուրիշ տեղ գացիք...

— Հա՛, Պէյօղլու գացինք մէկ քանի օր...

— Ո՛ր օրուան ժամը քանիին մեկնեցաք Տիկին և ո՛վ ո՛վ...

— Տօքթօն, հիւանդը աղջիկս է ըսինք, սահաթ մը առաջ նայէ տէ իլածը տուր ալթըն... վաղ եկայ ես նոր հէքիմութենէն դուն հինէն պաշլայէ...

— Խնդրեմ մի միջամտէք, որովհետեւ

կրնայ ըլլալ որ այս կարեւոր հարցումներէս մին մոռնամ և սխալ դեղ մը տամ...

— Անանկ է եա ճանըմ, Սեղրոս աղա բէք թօհաթ ևս, ձգէ քի տեղնիդ տեղօքը մուայէնէ ընէ տօքթօրը, կըսէ դրացուհին:

— Քա աղէկ ամա, մեր Պէյօղլու քանիին երթալը, թուանվայ նստիլը, թիւնէլով ելլալը, ինչ կապ ունի հիւանդութեան հետ:

— Աֆ կընես ամա քու կիտցած հէքիմներէդ չէ, ԵՏԳԸ ԿԸ ՏԵՍՆԱՍ...

— Լա՛ւ, Տիկին պալօ գացի՞ք...

— Էյ գացինք եա, ես չի գացի ամա ախջիկս խրկեցի...

— Օրիորդը սլարեր է պարահանդէսին մէջ արդեօք...

— Ձիտեմ ամա հէլպէթ, խաղացի՛ր քա նառթիկ...

— Այո խաղացի տօքթօն...

— Պարէն վերջ ինչ ըրիք, և քանիին մեկնեցաք սրահէն, բան մը կերա՞ք...

— Կը տեսնաս կոր Սեղրոս աղա, ինտոր պիշլիմի թամ գործին եանալմիշ եղաւ, կըսէ Տիկինը ամուսնոյն ականջին:

— Պէրէքեաթ վէրսին տիւմէնը ալապանտա կոխեցի, չէնէ հինգ ու կէսին տիլէճիին պէս երկու թառափը իսկէլէնէերը եանալմիշ պիտի ըլլար...

— Սո՛ւս, չեկայ իմանայ, վարպետ է եղեր վարպետ, պօշ լաֆ չեմ ուղեր, հէրիֆը նայէ ուրախներէն տառցաւ տէ կայանք տուաւ, կըսէ միամիտ տիկինը, մինչ տօքթօնը կը շարունակէ իր հարցափորձը:

— Շատ լաւ տիկին, կը հաճիք քիչ մը կազը գուրս հանել...

— Ինչո՛ւ չէ... ու կազը գուրս կեկայ:

— Կը հաճիք վարագոյրները վար առնել տիկին...

— Դիխուս վրայ, վարագոյրները կը գոցուին...

— Կը հաճիք սա մօմը մարել...

— Ինծի նայէ տօքթօն, աչք կապուկ չպիտի խաղանք, նէ՛ թէրթիպ տիր պու, ինչ տէյի մօմը մարեւք պիտի... խօսք կառնէ Սեղրոս աղան ոտքի վրայ ելլալով:

— Քա ճանըմ, ձգէ քի նոր պիշիմ հէքիմութիւնը իճրա ընէ...

— Ինչ կըսես քա կէօղ կէօրէ կը մութ-
ցունէ կոր օտան...

— Ներեցէք, շատ լաւ մօմը մի մարէք,
բայց մեղի մինակ ձգեցէք պահ մը հիւան-
դին հետ, այդ ձեւով ալ կըլլայ...

— Ես քեզի բան մը ըսեմ տօքթօն նոր
պիչիմ, հա՛, ես նէ մօմ կը մարեմ նէ ալ
քեզի մինակ կը ձգեմ, սա մեր գիտցածին
պէս հին պիչիմ՝ ռէչէթա մը կրնաս գրեր նէ
գրէ, չէնէ մօմը մարնեք նէ ամենքս մէկտեղ
դուրս կելանք:

— Առաջին անդամն է որ ասանկ պարա-
գայի մը կը հանդիպիմ կոր... և զարմա-
նալի է որ դուք բժշկին վրայ երբէք վստա-
հութիւն ցոյց չէք տար... Օրիորդը այն-
պիսի հիւանդութիւն մը ունի որ, պէտք է
մութ աչքով դարմանել, բժշկութիւնը այն-
պէս կը պահանջէ...

— Հասկցանք ամա իմ գործիս չի գար
միւսիւ տօքթօն, սրտեղը աչքերուս դիմա-
ցը պիտի նայիս նէ նայէ չէնէ բարով եկար...

Կեղծ բժիշկը պահ մը մտածելէ գլուխը
քերելէ վերջ կը համակերպի եւ գործի
կսկսի:

— Շատ լաւ մօմը կռնակնիդ առէք որ-
պէսդի շատ լոյս չի ցոլայ...

— Էհ ատ կըլլայ, սա կէօղիւկս բեր քա,
պէլայա օղրատըգ, ըսելով, Սեղբոս աղա
մէկ քով կը քաշուի և կսկսի պիշ պիշ դի-
տել, բան մը որ անշուշտ տօքթօնին գոր-
ծին չիգար:

Մեր կեղծ բժիշկը անկողինին մէկ կողմը
նստելով, միշտ օրիորդին բազկերակը ձեռ-
քը կսկսի հարցափորձել:

— Քօսսէ կը դնէ՞ք Օրիորդ և քանի թիւ:

— Այո՛ կը դնեմ տօքթօր, բայց թիւը
չեմ գիտեր...

— Այն ատեն պէտք է ձեր մէջքը քն-
նեմ և հասկնամ, ըսելով երբ կը պատրաս-
տուի քննել, Սեղբոս աղա խօսք կառնէ:

— Ինծի նայէ տօքթօն, մըղիւռաթ մեր
Նունիկին տաս տէ ան նայինէ չըլլա՞ր...

— Կաղզղաչեմ... ալ բաւ է, ձգեցէք
որ արհեստս ի գործ դնեմ...

— Շատ աղէկ, արհեստդ քօսսէճիութիւն
է քի չափը կառնես կոր...

— Էյ ալթըր էյ, ձգէ քի հէրիֆը ուճ-
լու պուճախը մուսայէնէ ընէ հասկնայ...

— Քա պնիկ աս հէքիմ չէ եղեր, մօ-
տիսթոա է մօտիսթոա, չընայիս մէջքին
չափը կառնէ կոր...

Անդին բժիշկը կը շարունակէ իր պըրպ-
տուքները:

— Ո՛ր կողմերնուդ վրայ կը պառկիք
Օրիորդ, ա՛ջ, ձա՛խ, գիշերը ժամը քանիին
կը պառկիք...

— Ընդհանրապէս ուշ կը պառկիմ տօք-
թօն, սիրտս միշտ կը ղարնէ, քունիս մէջ
շատ երազ կը տեսնեմ և անմիջապէս կը
ցատքեմ անկողինէս...

— Շատ լաւ կուրծքերնիդ կը բանա՞ք
Օրիորդ...

— Բաց քա աղջիկս, կէօքսէրդ բաց քի
միւսիւ տօքթօնը աղւոր մը նայի..., կըսէ
տիկին մայրը ինքն ալ օգնելով աղջկանը
որպէս դի չուտ բանայ:

Բժիշկը անմիջապէս — իր արհեստին բեր-
մունքովը անշուշտ — գլուխը կուրծքին
վրայ դնելով աչքերը կը գոցէ կը մնայ:

— Վրան եօղան մը տուէք, կը ձայնէ
Սեղբոս աղա, որ մէկ սիկառը կը մարէր
միւսը կը վառէր, նասըլ միւսիւ տօքթօն
հալածը աղւոր նետեր է բամպակը, ըռահաթ
ես...

— Քա ճանրմ ձգէ քի նայի տղան, եա-
պանճի է, անոնք հէքիմ են չօգ չէյ...
խօսք կառնէ տիկին մայրը, մինչ օրիորդը
ինքզինքմէն ելած աչքերը կը խաւարեցնէ և
յուզումէն պղտիկ մը կը խնդայ:

— Վարպետ հէքիմին ալ գործն ալ պաշ-
խա է սանքի, ծառքը վրան դրաւ նէ աղ-
ջըկանս վիճակը աղէկի տառցաւ կըսէ դրաց-
նուհին, որ կեցած տեղը գամուած մնացած
էր, իր միջնորդի դերը լաւ կատարած ըլլա-
լուն խնդուքներուն մէջ:

— Հայտէ նայինք տօքթօն, նայիլ էր նէ
եղաւ, օթէլի բարձ չէր ատիկայ, ելիր կայնէ
տէ ըռէչէթադ գրէ, կըսէ Սեղբոս աղա:

— Խնդրեմ, ձայն մի հանէք, որովհետեւ
չեմ կրնար կոր լսել ներքին փափախումները
կըսէ կեղծ տօքթօնը:

— Ինծի նայէ Սեղբոս աղա, հայտէ պա-

հիկ մը դուռն դուռս ելիր, զէրէ շաշըրտմիշ կընես կոր, հայտէ ...

— Իշտէ ես կեւլամ կոր, կեւլամ կո՛ր ամա՞, ետթախը իլէն բարձը հաղ ընէ տէ սըղմիշ ընէ՞ նէ չեմ խառնուիր, ըսելով դուռս կեւլայ սենեակէն:

Քիչ վերջը կեղծ բժիշկը ուզելով մայրն ալ դուռս հանել սենեակէն, կըսէ,

— Խնդրեմ տիկին, աստեղուանքը խոռոզ իպիյի կը գտնուի՝ արդեօք, հիմա պէտք պիտի ունենամ ...

— Խոռոզ իպիյի՞ ... չիտեմ ամա մինք չունինք, աճապ մահալլէին մէջը ունեցող կա՞յ ... մէյ մը երթամ հարցունեմ ...

— Այո՛, այո՛, ատոր շատ պէտք ունիմ, եթէ չի գտնուելու ըլլայ, կըլլայ որ հիւանդին կացութիւնը կը փոխուի ...

— Էյ բէք աղէկ, թացութիւնը փոխեմ տէ անանկ երթամ չէնէ, իրաւ ես ...

— Ո՛չ, ո՛չ, վիճակը ըսել կուզեմ տիկին, չո՛ւտ, ատեն մ'անցնէք կըսէ բժիշկը, ու երբ միամիտ մայրը դուռս կ'եւլայ սենեակէն ուզած դեղը գտնելու համար, Սեղրոս աղա դիմաւորելով,

— Ի՞նչ է ան, դո՛ւն ալ դուռս կեւլաս կոր ...

— Սուս ամա՛ն, խոռոզ իպիյի կուզէ կոր տօքթօը, երթամ նայիմ կընամ գտնար մահալլէն ...

— Ի՞նչ ... խոռոզ իպիյի՞ ... չըսես քի աս հէրիֆը պիւլիւճիւ է եղէր տէյի, քա՞տ ըսածդ ֆալճի կընիկներուն չըխընին մէջը կըլլայ՞ ...

— Ամա՛ն Սեղրոս աղա, սիրտ չունիմ քեզի մէրամ հասկցնելու, աղջիկս ծառքէ կեւլայ կոր ...

— Ատ չիտա՞յ ըսիր, աղջիկնիս ծառքէ կեւլայ կոր ամա, տիրի տիրի ծառքէ կեւլայ կոր ...

Ներսը, երբ տիկին մայրը մտայածին դեղը փնտռելու համար երբ դուռս կեւլայ, կեղծ տօքթօը սենեակին մէջտեղը կը ցատկէ, որուն կը հետեւի ճերմակ գիշերնոցով երեւակայական հիւանդը, և երկուքը մէկ կը նստին բազմոցին վրայ, մինչ դրացնուհին խօսք կառնէ,

— Ինձի նայեցէք ետվրուներս, ես ա-

սանկ խալթ չէի ուտեր ամա, իբար պիտի առնէք տէյի կընեմ կոր, չէնէ աս իմ զէնահաթս չէ, ես ալ վախտով ասանկ բաներ ըրեր եմ, կուլիսէս անցեր են տէ գիտեմ ինչ կրակ ըլլալը, նէ իսէ, ես սանկ մրարեմ տէ դուք տեսնուեցէք ըսելով՝ ասդին կը քաշուի, մինչ երկու սիրահալ սիրահարները քիթ քիթի կակսին տեսակցիլ:

— Ախ հոգիս, սքանչելի կեղծեցիք հիւանդութիւննիդ ...

— Դուք ալ, շատ աղւոր բժիշկ մը եղաք, բայց ատին ատեն կը շուարէիք կոր ...

— Սրտիս հուրը դիս մղեց օրիորդ, թոյլ կուտա՞ք որ համբուրեմ ձեր կաթնաթոյր ձեռքը, որուն համար այսքան տանջանք յանձն առի ...

— Պերնիդ ծանը մի հանէր, հարը դուրսըն է, կըսէ միջնորդուհին ...

Ու մինչ այսպէս յաջող կերպով կը շարունակէին սիրուելիլ, յանկարծ Սեղրոս աղա որ դրանք բանալիին ծակէն կը դիտէր, ներս կը մտնէ ...

— Նասըլ միւսիւ տօքթօը, օրէնապիօնի պէտք եղաւ, ի՞նչ եղաւ, չէնէ մի հրաչքով մը տիրիլմիշ եղաւ Նաութուհին ...

— Քիչ մը քալել տալ հարկ տեսայ, ուստի ...

— Հայտէ օղլում շարխադ դիր տէ պոյ մըն ալ հրամանդը քալելու հարկը տես, չէնէ երեք ատըմով սօխախին դուռը կը գտնաս ինքզինքդ ...

— Բայց քանի որ ... ու պիտի շարունակէր խօսքը, իսկոյն տիկին մայրը վրայ կը հասնի,

— Էյ Ասծուծու աչկին մեռնիմ, խոռոզին իպիկը չի գտայ ամա, աղջիկս ոտք է ելէր ... զօրքին մեռնիմ ...

— Քիչ մը տահա վրայ չի հասնէիր նէ խոռոզին իպիկը հազրը պիտի գտնայիր, չիւնքիւ պիտի կըտցէի ալթըլս ..., աս աղջկանը հիւանդութիւնը հէքիմի բան չէ եղէր ... բարեկենդան էրթէսիի աս պիլիմ հիւանդութիւններուն անո՞ւնը, քօթէկ թիֆօսի կըսենք քի, խըղըճըլին փատէն պալխա պան թաթիր չընէր ...

— Ա... ձ... ա... պա՛ ...:

ԲԱՑ-ԳՈՑ ՆԱՄԱԿ

Ազգ. Օր. Ձազախն

Հանրագիտակի 24րդ թիւը, որուն առաջին էջերը գրաւած էր Ձեր Օրագիրը՝ կարգացի։ Այս անգամ, Ձեր սովորական պատժաւածքներէն չեղում մը ընելով գրախօսականով մը փայլեցնել ձեր տաղանդը և որուն մէջ չեմ գիտեր ինչ բառքի բռնով մը Ձեր կաթնաթոյր թաթիկովը զարնել ուզած էիք Ձեր գրչի աղբարիկներուն, որոնք ոչ երեկուաններն էին և ոչ ալ առջի օրուանները, այլ տարիներէ ի վեր գրական ձեր սիրած և փառաբանած ճիւղին՝ երգիծականին և զաւեստին մշակները որոնք ձենէ շատ առաջ կարդացուած են ընթերցողներէ։

Երկտողս նպատակ չունի ջրելու Ձեր յօդուածը, ո՛չ, այլ դիտողութիւն մը, եթէ կը ներէք Ազնիւ Օրիորդ Ձեր այն միջինիկ լառին համար, զոր չեմ գիտեր թէ՛ Ձեր ամուրի նորաբողոք տարիքին մէջ ո՞վ սովորեցնելու մեղքը գործած է՝ ՎիթԱՄԸ։

Ալիիարէն, Լիլաէն և Թօլայէն դուրս ամէնն ալ վիժած կը համարէք, բան մը որ նոյն իսկ Ձեր պաշտպանած բաց գրող-եռոտանին անգամ պիտի խնայէր իր յօդուածներուն մէջ, չէ՞։

Պէտք է ըսել որ մենք վիճարկողներ չենք, սակայն վիժած ալ կոչուելու չափ սկսնակներ չենք ոչ ալ նորագոյններէն։ Կարծեմ տարիներ առաջ կարդալով զմեզ փառքեցաք աշխատակցի ձեր և մեր սիրական Հանրագիտակին։ Արդ քիչ մը ծիծաղելի չէ՞ր այն տողերը, որոնք մեզ կը յիշեցնեն քիչ մը կոչտ՝ սակայն à propos առածը՝ քաղսափի կելմբե պաղսափին ֆօլույօր...։

Կրնայի պահանջել որ ետ առնէիք ձեր տողերը և շատ լաւ գիտէի գործադրութեան դնելու կերպը, սակայն Ձեր սկսնակի անփորձութեան վերագրելով, կը բաւականամ մի միայն խնդրելով Ձեզ թէ լաւ կընէք Օրիորդ՝ երբ չարունակէք Ձեր առանին մասնաւոր դասաւանդութիւններով զբաղիլ տանք մէջ՝ քան թէ Ձեր ամուրի և անփորձ տարիքով accouchementի մանրամասնութիւններով Հանրագիտակի մէջ։

Ն. ԵՐԵՍ. ՊՈՒԷ (*)

(*) Իրաւ թէ այս բաց-գոյց նամակը ժամանակին հասած էր խմբագրութեանս, բայց տեղի անձկութիւնը պատճառ եղած է անոր ուշանալուն։ Կարկաւ մեր աշխատակիցը նըկատի կառնէ այս բանը։

ԽՄԲ.

ԳՈՐԳԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՎԵՐՋԻՆ ՄԵԹՈՏԸ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՁ

Գալիֆօրնիայի նահանգին քաղաքներէն մէկին մէջ հարուստ վաթսուներորդ Տիկին մը շքեղ տուն մը շինել կուտայ։ Բոլոր գորգավաճառները անհամբեր տունին աւարտելուն կսպասեն։

Հազիւ թէ չէնք լրանալու կը մօտենայ, բոլորը միասին գորգերնին առած կը խուժեն նորաչէն տունը, ինչպէս սովոր են ընել երբ նոր տուն մը շինուի։ Երկայն մըրցումէ մը յետոյ Հայ հարուստ վաճառական մը կարող կըլլայ համոզել Տիկինը որ իր գորգերը գնէ, իսկ միւսները յուսկոտուր կը մեկնին իրենց տեղերը։ Ասոնց մէջ էր երիտասարդ մը, որ այս պարագայ աշխատութեան վրայ ցաւելով, հետեւեալ նոր մեթոտը կը հնարէ, որ ահա կը պատմենք,

Սոյն վաճառական պարոնը, տիկնոջ տունը կը դիմէ դարձեալ և ծառան կը համոզէ որ զինքը Տիկնոջ քով մտցնէ. ծառան կը համոզուի ու իսկոյն ինք հիւրանոց կը հըրաւիրուի՝ Տիկնոջ գալուն սպասելու։

Քանի մը բոպէ յետոյ Տիկինը իր հիւրը տեսնալու կուգայ ու կը բարեւէ մեր ճարպիկ վաճառականը։

Հազիւ թէ Տիկնոջ երեսը կը նայի կամ ոչ կսկսի լալ. — Հիւ հիւ հիւ հիւ հիւ...

Խեղճ ծերուկ կինը շուարած ապշած աչքով կողմը կը նայի բան մը չհասկնալով, և իր ձեռքը երիտասարդին ուսին վրայ դնելով կը հարցնէ. — Տղաս, ինչ ունիս, ինչո՞ւ կուլաս։

— Օհ, հիւ հիւ հիւ հիւ հիւ հիւ հիւ...

— Ըսէ՛ խնդրեմ ինչո՞ւ կուլաս, կը կրկնէ։

— Ա՛խ մայրիկս մայրիկս, ես մայր մը ունիմ որ ինձ շատ սիրելի էր եւ մեռաւ. ճիշդ ձեզի կը նմանէր, երբ ձեր երեսը տեսայ չկրցայ ինքզինքս զսպել, հիւ հիւ հիւ...

— Տղաս մի լար, աշխարհ տասնէ է. և քանի որ մօրդ կը նմանիմ ես քեզի մայր կըլլամ ու կօգնեմ քեզի որքան որ ձեռքեք գայ։ — Ա՛խ, ուրիշ կերպով չես կրնար օգնել ինձ այլ միայն գնելիք գորգերդ ինձմէ...

Տիկինը կը հաւանի, միւսէն ետ կառնէ, մեր ճարպիկը կը շահի...

7 Փետր. 1908 (Նիւ-Եօրք) ՀԵՐԱԹ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐՆԵՐ

ԲԵՐԱ. Աղա համամ. — Տեղւոյս կանանց բաղնիքէն, ատենէ մը ի վեր գողութիւնները անպակաս են, սանտր, պլուզ, մինչեւ անգամ բալթօներ տէրերուն լուացուելէն առաջ... դուրս կելլան կոր: (Կը յանձնարարենք պատմա բեշով բաղնիք երթալ կամ գիշերնոցով. Ծ. Խ.):

ՊՐՈՒՍԱ. — Հոս օրուան նորոյթն է Հայ-Լայն դասակարգին Պալ-մասէ մը սարքելը, որու մէջ եղած կարգ մը ալակեր-պութիւնները խնդուքի ճոխնիւթ մատակարարեցին ոչ Հայ-լայն դասակարգին, Կուզենք գիտնալ թէ ինչ էր եղածը, ինչու համար էր և ինչի ծառայեց...:

ՍԿԻՒՏԱՐ. — Երկուշաբթիի մշուշին գիշերը, տեղացի կարգ մը տիկիններ, իրենց ամուսինը չի գալուն համար վախերնուն մէկ մէկ քար, ոմանք ալ փխիկներ առին ծոցերին: (Դալ չարթու ընդարձակ յօդուած մը ունիմ այս առթիւ. Ծ. Լ.):

ՆՈՅՆ. — Կարգ մը այրերու համար կըսուի թէ՛ Ղալաթիոյ եկեղեցին մոմ վառեր են՝ Աստուած զիրենք գիշեր մը Բերա մնալ հարկադրելուն համար:

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Ինչ ըսենք ան Հայտար-Բաշայի չոգենաւին որ մէքիկի պէս բանեցաւ՝ առիթ չձգելով մեզ օգտուիլ մըշուշէն:


ԲԵՐԱ. — Օթէլները լեցուն ըլլալուն, շատերը ստիպուեցան մահալլէ պէքճիսի պէս փողոցները թափառիլ և ուրիշներ ծովային ճամբորդութիւն ընելու պէս քամառաներու մէջ անցուցին... իրենց անօթու-թիւնը:

ԹԱԹԱՎԼԱ. — Հոս Ստրիտեա բանայի-րին օրը, Դումաբուցի տիկին մը իր նըշանած աղջիկը չի կրնալով զսպել՝ մազերը թելը փաթթած տիներ է: (Արդեօք այս լուրը նշանածին համար աղետաբեր է... Ծ. Խ.):

Արտօգրք ԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐՆԵՐ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի ճասէսի բիւ 52.



Յ. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ

Ահա՛, Մնակեան բեմին է՛ն սիրուած և գնահատուած դէմքը, որուն ի նպաստ ուրբաթ գիշեր (29 փետ. 1908) չքեղ և և մեծաւ պատրաստութեամբ կը ներկայացուի՝

ԲԻԷՌ ՏԻԻ ԾԸՄԵՆ

Բիէս մը որ այնքան ծափեր խլած է թատերասէր հասարակութենէն:

Ամէն անոնք՝ որոնք Մնակեան խմբին ծարաւը կը քաշէին անոր բուռններուն պատճառաւ, պիտի կրնան կուշտ ու կուռ վայելել ուրբաթ գիշեր և անգամ մ'ալ ծափահարել մեր միմիակ Օսմ. թատերախումբը՝ ի պատիւ և ի նպաստ անգուգական հա-կառակորդ ԱԼԻՔՍԱՆԵԱՆ էֆէնտիի:

Գիները չափաւս

ՄԵԾ Կ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՆՈՅՐԱՅԵԱՆՔՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Հանաւ, Թօփաչեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ
տոկունութեամբ և գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բոլորիներու
և տղայոց շիւք և դիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ միտերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50 — 23



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեռայ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեդանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
րոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար սաւեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	» » 54 »	» »	27 »
Արսասանման	» » 12 Ֆր.	» »	6 Ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապը-Ալի Եւսսէսի Աստուրեան տպարան թիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտաբութով և կամ բոսթայի փուլով 20 հաւաք
20 ղրուլի հաշուով:

1908

ՆՈՐ ՏԱՐՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ

ՆՈՐՈՒԹԻՒՆԸ

Յ. Գ. ՓԱՆԳԱՇԵԱՆ

ԳԱՆՁ ԻՐԱԳԻՏԱԿԱՆ

ԱՅՍ ԳՐԻՆ ՀԱՄԱՐ, ՅԱՏԿԱՊԵՍ ԳՈՐԱԳՐՈՒԱԾ
300 ՊԱՏԵՐՆԵՐՈՎ

Անմարդկային բնականորեն Դասագիրք՝
Տար. Դասընթացի երկսեռ աշակերտաց հա-
մար : Գին 5 դրուս :

Կեդրոնաօրինակ է հեղինակին սեպհական
ԳՐԱՐՈՒՆ ԳՐԱՏՈՒՆ, Կ. Պոլիս, Մեծ Նոր
խան, վերի յարկ, թիւ 55 :

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԱՏԱՄ ՃԱՆԻԿ ՔԷՍՃԵԱՆ

3 Պահյե-գաբու թիւ 3

Սոյն վաճառատան մէջ պիտի կըր-
նաք գտնել այն ամէն չիք, տոկոսն և
աժան առարկայները, որոնք թօհա-
ֆիլէի մաս կը կազմեն : Անգամ մը այ-
ցելելը համոզում պիտի կրնայ գոյաց-
նել թէ ուրիշ ո՛ր եւ է տեղ չպիտի կըր-
նաք գտնել նոյնքան ճոխ մթերք մը
այն բնառուած արթիւքօլօին վրայ :

ԳԱՌՆԻԿ ՔԷԾԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանօ-Բուլօխան թիւ 2

Նախ փորձառուները, յետոյ Իւր-
ուողները միայն գիտեն էթ ո՛րչափ
դժուար է, գտնել ու գնել ապրանք-
ներ՝ որոնք թէ տոկոսն ըլլան՝ թէ ճա-
շակաւոր և թէ . . . աժան :

Գառնիկ Քէշիշեան վաճառատներս
թօհաֆիլէի էն առաջնակարգ Եւրոպա-
կան գործարաններէն բերել տուած է
տեսակ տեսակ կանանց և արանց յա-
տուկ ֆանէլաներ, գուլպաներ, քաշիկնակ-
ներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեններ,
ֆիլսիֆու և խիտ ճաշակաւոր ներգնաւապիկ-
ներ, գլխու շարքեր, ֆաէֆօնսէներ ևլն. ևլն.

Ջերմապէս կը յանձնարենք անգամ
մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ
անպատճառ դո՛հ մնացողներ միշտ հոն
գիմելով պիտի հաստատեն թէ՛ գիներ-
ուէլաժանութեան, ճեսակի ազնուութեան և
նախանգ տոկոսութեան երեք առաւել-
լուծիւնները ուրիշ ո՛ր եւ է տեղ կարելի
չէ գտնել :